ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 35-Ա

<<21>> հունիսի 2023 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի ՎՃՌՈՎ /ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾ՝ ՇԴ3/1726/02/21/ ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՆՅԱՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ, ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ, Հ. ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 22 ՀԱՍՑԵԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՏԱՂԱՎԱՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0.01668 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՆՅԱՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, 2-րդ մասի, 73-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2023 թվականի փետրվարի 3-ի վճիռը /քաղաքացիական գործ՝ ՇԴ3/1726/02/21/՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի ավտոկայանի տարածքում տեղադրված, մարզ Շիրակ, քաղաք Մարալիկ, Հ. Շահինյան փողոց, թիվ 6/7 հասցեում գտնվող տաղավարի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով քաղաքացի Հովհաննես Վանյայի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ, հաշվի առնելով քաղաքացու 2023 թվականի ապրիլի 20-ի դիմումը՝ տաղավարի պահպանման համար նախատեսված 140.8 քառակուսի մետր մակերեսով հողամասը /կադաստրային ծածկագիր՝ 08-003-0033-0002/ իրեն վաճառելու մասին.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2023 թվականի փետրվարի 3-ի վճռով /քաղաքացիական գործ՝ ՇԴ3/1726/02/21/՝ քաղաքացի Հովհաննես Վանյայի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը ճանաչված մարզ Շիրակ, քաղաք Մարալիկ, Հ. Շահինյան փողոց, թիվ 6/7 հասցեում գտնվող հանրային սննդի տաղավարի պահպանման համար նախատեսված համայնքի սեփականություն հանդիսացող 08-003-0033-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.01668 հեկտար մակերեսով հողամասը, ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային

արժեքի չափով, ընդամենը՝ 132110 (մեկ հարյուր երեսուներկու հազար մեկ հարյուր տաս) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Հովհաննես Վանյայի Հովհաննիսյանին (անձնագիր՝ AM 0594126, տրված՝ 13.01.2012 թվականին, 022-ի կողմից, հաշվառման հասցեն՝ մարզ Շիրակ, քաղաք Մարալիկ, Նոր թաղամաս, 9-րդ փողոց, տուն 19):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացի Հովհաննես Վանյայի Հովհաննիսյանի հետ /այսուհետև՝ քաղաքացի/ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր և ապահովել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ-11	Դեմ – 0	Ձեռնպահ – 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<21>> հունիսի 2023 թ.
քաղաք Մարալիկ